# ԱԶԳԱՅԻՆ

## ՎԵՀ. ԿԱԹՈՂԻԿՈՍ.

Ի 17ն ամսոյս Վեհ. Հայրապետն ի Բիւրական գնաց, ուր անցեալ տարի ամառանոցի յատուկ տուն պատրաստուեցաւ մի ընդարձակ՝ և բարձրաւանդակ գեղեցկադիր վայրում:

## ՏԵՍՈՒՉ ՃԵՄԱՐԱՆԻ.

Գեր. Գաբրիէլ Ս. Արքեպիսկոպոս Այվազեան՝ ի Վեհ. Հայրապետէ՝ յատուկ Կոնդակաւ՝ Մայր Աթոռոյս նորաբաց Ճեմարանի Տեսուչ կարգեցաւ:

Նորին Գերապատուութեան ստացած և բարեհամբաւեալ մտաւորական և բարոյական բարձր և բազում արժանաւորութեանց հետ՝ դաստիարակութեան կենսական խնդրոյ և արդեանց մէջ ևս ունեցած ողջամիտ՝ բազմափորձ հմտութիւնն և յաջողակութիւնն մեծ գրաւական պիտի լինի Ճեմարանի ապագային համար, և կյուսամք որ կարևոր աջակցութեամբք և օժանդակութեամբ նպաստաւորեալ՝ Աստուծով կյաջողի իւր մեծ Անուան և բազմափորձ հմտութեանցըն համաձայն մեծ և փառաւոր արդեամբք զարդարել և ճոխացնել զՃեմարան Մայր Աթոռոյս, և Վեհ. Հայրապետի՝ ինչպէս նաև Հայաստանեայց Եկեղեցւոյ և Ազգի արդար և մեծայոյս ակնկալութիւնքը պսակել, միանգամայն առաւել ևս շքեղացնել և պայծառացնել իւր մեծահամբաւ և արժանաւոր անունը և փառքը:

## Ի ՃԵՄԱՐԱՆ.

Ճեմարանի այրեցեալ մասին (բաց ի հանդիսարանէն) վերաշինութիւնք և այլ վերանորոգութիւնք ըստ բաւականին լրացած լինելով՝ ի 10ն ամսոյս՝ կարելի եղաւ համայն աշակերտքը փոխադրել ի Ճեմարան, ուր կշարունակեն իւրեանց պարտաւորութիւնքը:

Արարատայ Սեպտեմբերի ամսագրոյն մէջ Ճեմարանի կազմութեան՝ ինչպէս նա և աշակերտաց թուոյն և բաժանմանց վերայ կարևոր տեղեկութիւնքը կհաղորդեմք ի գիտութիւն մեր սիրելի Ազգայնոց:

## ՀԱՅՈՑ ՁԱՅՆԱԳՐՈՒԹԻՒՆ Ի ՎԻՃԱԿՍ ԵՒ ՆԻԿՈՂԱՅՈՍ ԹԱՇՃԵԱՆՑ.

Ռուսաստանի Հայոց վիճակներէն՝ Եկեղեցական Ձայնագրութեան տարածման և յառաջադիմութեան համար ըստ բաւականին բերկրալից տեղեկութիւններ հետզհետէ կյաճախեն, և ամեն ուրեք ուսանողաց մէջ երևեցած խանդն և եռանդն՝ և անխոնջ ջանիւք և յարատևութեամբ ուսանելոյ փոյթերն մեծ մխիթարութիւն կը պատճառեն Վեհ. Հայրապետի՝ ինչպէս նաև համայն հոգեսէր և եռանդուն Հայոց սրտից:

Եւ ժողովրդեան արտայայտած համակրութիւնը և հոգեզուարճ բերկրութիւնքը՝ ինչպէս կհաղորդեն մեզ՝ աւելի գրգիռ և խրախոյս կը տայ թէ դասատուաց և թէ դասառուաց:

Ի պայծառութիւն և ի պարծանս Հայաստանեայց Եկեղեցւոյ և Ազգի՝ նորին

հարազատ և ողջամիտ որդւոց կողմանէ ինչպէս շատ առիթներու մէջ՝ նոյնպէս Հայոց Եկեղ․ Ձայնագրութեան տարածման և զարգացման համար ամեն ուրեք տեսնուած համակրութիւն և եռանդուն փոյթն՝ յաւէտ մեծ գոհունակութեանց արժանի է։ Վասն զի Եկեղեցւոյ համար եղած որպիսի և իցէ յառաջադիմական և օգտաւէտ ջանից յարգը և կարևորութիւնը երբ ժողովուրդն ինքնին կզգայ և ամեն կերպով կըխրախուսէ, այնուհետև շատ հեշտ է յարատևութեամբ պահել առաջադրեալ նպատակը, և ով կարող է ժողովրդական համակրութեան և աջակցութեան հակակշռել և դիմադրել՝ միանգամայն գործոյն խափանումն տալ։ Իրաւ է՝ և երբէք չէ կարելի ժխտել՝ որ ամեն ժամանակ և ամեն տեսակ պիտանի և բարի գործողութեանց և նպատակաց դէմ՝ նայելով թէ որ աստիճան կարևորութիւն՝ նշանակութիւն և արժանաւորութիւն ունի՝ և ըստ այնմ թէ շատ և թէ սակաւ արգելքներ կըխիզախեն անբարեմիտ կամ վարձկան անձինքներէն, սակայն երբ ջանքն անխոնջ և յարատև՝ ինչպէս նա և ժողովրդեան սիրալիր աջակցութիւնը սերտիւ լծակցած է՝ տեսնուա՞ծ է և կարելի՞ է մտածել՝ որ բարի նպատակը խափանուի։ Չէ՞ որ երբ և իցէ արդիւնաւորուած է և կարդիւնաւորուի՝ թէ և երբեմն անագան ևս լինի։

Այս հարևանցի դիտողութեամբ կամիմք խրախոյս տալ Ձայնագրութեան դասատուաց, որ ինչպէս ցարդ՝ նոյնպէս այսուհետև անխոնջ յարատևեն իւրեանց պարտաւորութեանց ի լրումն՝ աննախանձ մատակարարելով Ձայնագրութեան արուեստը՝ ինչպէս որ իւրեանց դասատուն՝ Ձայնագրագէտ Պ. Նիկողայոս Ա. Թաշճեանց աննախանձաբար՝ մեծ եռանդով և սիրով աւանդեց և հրահանգ տուաւ, մանաւանդ Ձայնագրեալ շարականի տպագրութիւնը վերջացած լինելով,—որ սակաւ միջոցէն զնիլ կըխրկուի ի կարևոր տեղիս,— դասատուաց և դասառուաց աշխատութեանց արդիւնք այսուհետև աւելի ըղձալի և յաջողակ կլինին և փոխադարձաբար կմխիթարուին, և կյուսամք որ՝ մի քանի ամիսէն յետոյ՝ աստ ի Ս. Էջմիածնէ խրկուելիք ՔՆՆԻՉՆ ևս նոցա վաստակները առաւել ևս արդիւնաւոր գտնելով՝ կտեղեկացրէ, յորմէ կարևորները ևս կհաղորդեմք ի տեղեկութիւն և ի գիտութիւն մերազնեայց։

Այս բարեպատեհ առթիւ քաղցր մի պարտք կզգամք և կփութամք կատարել յառաջապէս և հրապարակաւ խորին շնորհակալութիւն յայտնելով առ Ազգային նշանաւոր և քաջահմուտ Ձայնագրագէտ Պ. Նիկողայոս Ա. Թաշճեանց երաժշտապետն՝ Ձայնագրութեան արուեստը աննախանձաբար և եռանդուն սիրով տարածելոյ և արդիւնաւորելոյ ջանից և անխոնջ աշխատութեանց համար, միանգամայն հետևեալ մի քանի խօսքը ևս կյաւելումք։

Հայոց Ձայնագրութեան վերայ Պապա Համբարձումին ուշ և խնամք՝ միանգամայն նոր հեղինակութիւն տալէն ի վեր՝ երկար տարիներ անցած էին և այնքան ամաց մէջ ի Կ. Պօլիս հազիւ մի քանի անձանց կարելի եղած էր Ձայնագրութիւնը ուսանել, բայց դարձեալ մեծ խստութիւն կար անձուկ շրջանի մէջ՝ ինչ-

պէս նա և իւրև մենաշնորհ պահելոյ համար: Մանաւանդ երբ մի ժամանակ մի անձն միայն մնաց՝ որ Զայնագրութիւն գիտէր և զայն կդասաւանդէր, սակայն ո՛րքան կմնարիւրեմք՝ 30—35 գուցէ աւելի ևս տարիներու մէջ հազիւ երկու աշակերտ ունեցած էր, որք երկար տարիներ նորա մօտ դեգերուելով և անձնանուէր ծառայելով՝ ի վերջոյ յուսահատուեցան և նորա ունեցած դասական գրուածները՝ հրահանգ եղն. տետրակները մի հնարքով ի ձեռս բերելով՝ այնուհետև ինքնին աշխատասիրած են Զայնագրութեան արւեստը և հետզհետէ աւելի վարժուելով՝ նա և արուեստը ծաղկեցուցած են: Վերոյիշեալ երկու աշակերտներէն միայն Գաբրիէլ Երանեանն էր *)՝ որ մի քանի տարուան մէջ մի քանի աշակերտներ հասուց, որոց մէկն և գլխաւորն է Գ. Թաշճեան, թէպէտ արժանայիշատակ Երանեանն ևս առանց պայմանաց և երդման ուսուցած չէր, յորոց մէկն էր՝ իւր կենդանութեան միջոցում՝ իւր հացին արգելք չլինել, և երկրորդ՝ երբէք Յունաց չուսուցանել եւլն **):

Գ. Թաշճեանն ուսանելով և գիտնալով Եւրոպական ձայնագրութիւն ևս՝ և իւր սրամտութեամբ և յաջողակութեամբ անխոնջ հետևած է և ինքնին յաջողած Հայկական Զայնագրութիւնը հետզհետէ կատարելագործելոյ և աւելի ծաղկեցնելոյ՝ զանազան հասկացող անձանց տարբեր տարբեր գիտզութիւններէն ևս օգուտ քաղելով և կարող անձանցմէ խորհուրդներ լսելով, միանգամայն վառվռուն եռանդ ունենալով Զայնագրութիւնը տարածել՝ միջոց կփնտռէր իւր նպատակին հասանելոյ, որ և Վեհ. Հայրապետի երկարժամանակեայ նպատակին և բաղձանաց աջակցել բաղձալով՝ ևս խրախոյս անելով, եկաւ այսր ի Ս. Էջմիածին և արդիւնաւորեց իւր արուեստը՝ տալով մենաշնորհի և մենադասաւանդելոյ վատ սովորութիւնը՝ և աննախանձ և սիրով մատակարարելով իւր աշակերտաց, որով Գ.

---

(*) Եւ միւսն է Համբարձում Չերչիճեան, յորմէ ի 1867 ամին ի Կ. Պոլիս ես ինքս դաս առի, և Վեհ. Հայրապետի յանակնունելի հանգամանաց և ի դիպուածոց ստիպեալ դէպ այսր ի Ս. Էջմիածին փութով ուղևորուիլն պատճառ եղաւ՝ որ յայնժամ չկարողացայ կատարելագործել ձայնագրութեան ուսումս։

(**) Երբ այսպիսի պատճառներով, — յորոց առաջինն է մենադասաւանդելոյ և օգտուելոյ նախանձն և անձնական շահն միայն, — Զայնագրութեան աննախանձ դասաւանդութիւնը կըղլացւէր և երկար տարիներ կտևէր և պիտի տևէր՝ քանի՛ որ դասատուն՝ եթէ չասեմ երբէք՝ գո՛նէ շուտով ուսուցանելոյ միտք չունէր, որպէս զի իւր հացին դէմ արգելքներ չշատանան, վասն էր կզարմանայ մի պարոն Զայնագրագէտ՝ թէ Գ. Թաշճեան ի՞նչպէս կարողացաւ գրեթէ կարճ միջոցում՝ դեռ մի տարին չբոլորուած՝ ինքեան յանձնեալ աշակերտաց Հայոց եկեղեցական Զայնագրութիւնը ուսուցանել, մինչդեռ եթէ խղճի՛ հմտութեամբ և միջակ աշխատութեամբ դասաւանդուէր առ առաւելն՝ տասն ամսէն աւելի չտևեր և չպիտի տևէ Զայնագրութեան ուսման ժամանակը, և եթէ միարան ջանիւք և խորհրդով աւելի մշակուին դասաւանդութեան հրահանգներն և եղանակներն, շատ դժուար չպիտի լինի 5—6 ամսուան մէջ ուսուցանելն քան անձինքը մի կարգ չինելով՝ որական մի մի ժամով և մէն մի դաս պարապել հաշուելով.

Թաշճեանն՝ զկնի Պապա Համբարձումի՝ արժանացաւ Հայկական Ձայնագրութիւնը ծաղկեցնողներուն մէջ երկրորդ տեղը բռնել, իսկ Շարականքը և եկեղեցական ամէն երգերը ձայնագրելով և ի տպագրութիւն յանձնելով՝ առաջին տեղը իրաւամբք գրաւած է, զոր անշուշտ Ազգային և Եկեղեցական պատմութիւնք մեր ի ժամանակին ըստ արժանւոյն և ըստ վաստակոցն պիտի գնահատեն և նորա անունը պիտի փառաւորեն։

Յիրաւի՝ ինչպէս ամեն արուեստ և գիտութիւնք՝ միշտ կարօտ են մշակման և կատարելագործութեանց, և հետզհետէ աւելի կզարգանան այլ և այլ աշխատասիրողաց ջանիւք և անխոնջ հետևողութեամբք, որով իւրաքանչիւր աշխատասիրողն ևս ըստ անձնիւր ջանից և արդեանց արժանի կլինի գովեստից և շնորհակալութեանց, այսպէս ևս Հայոց Ձայնագրութիւն որքան որ այսօր գերազանց վիճակ ունի և Եւրոպական ձայնագրութենէն աւելի ճոխ և յարմար է՝ իսկ Յունականէն խիստ շատ աւելի, բայց դարձեալ պէտք է խոստովանել որ՝ հետզհետէ թէ դասաւորութեան և թէ դասառութեան համար աւելի դիւրին եղանակներ և հրահանգներու կարօտ է և պէտք է ջանալ զայն կատարելագործել, և Եւրոպականէն զատ՝ նա և Ասիական ամէն եղանակ և խառն դարձուածները առաւել հիշտ և դիւրին ձայնագրելոյ համար՝ նոր նոր կանոններ և հրահանգներով զարգացնել, այնպէս որ՝ Հայկական Ձայնագրութիւնը ամէն տեղ նախանձելի և գերազանցագոյն վիճակ ըստանայ, և հետզհետէ աւելի սակաւ միջոցի մէջ ուսուցանելոյ և ուսանելոյ դիւրութիւնը հնարուի՝ ինչպէս որ ի ներկայս՝ Պ. Թաշճեանի յառաջ ուշադրութեամբ և հետևողութեամբ՝ այլոց ձայնագրիտաց՝ ինչպէս նաև նորա վարժապետին մի քանի տարուայ մէջ աւանդած՝ շատ հանգիստ և դիւրութեամբ մի տարուայ մէջ կաւանդուի, որ արդէն խօսքէն աւելի փորձով հաստատուած է և ըստ այնմ դասագիրք ևս պատրաստուած՝ կանխաւ դանուածները աւելի ևս մշակելով և ճոխացնելով։ Այո՝ Հայոց Եկեղ. Ձայնագրութեան կատարելագործութեան և արդիւնաւորութեան նըկատմամբ ի ներկայս Պ. Թաշճեանէն տեսնուած ջանքը խիստ մեծ է և բազմարդիւն, իսկ նորա գործնական յաջողակութեան մէջ ունեցած գերազանց արժանիքը լոկ գրական՝ վերացական և փայլաբանական գրդիւն չլինելով՝ ամէն բանէ աւելի գովելի և նախադասելի է. սակայն նոյն ինքն Պ. Թաշճեան՝ տակաւին անխոնջ կհետևի և պիտի հետևի Հայոց Ձայնագրութիւնը աւելի ևս մշակելոյ՝ ճոխացնելոյ և պայծառացնելոյ՝ և միշտ պատրաստ է և կըխնդրէ լսել հասկացող և ողջամիտ թէ Հայկական և թէ Եւրոպական ձայնագրագիտաց՝ ինչպէս նա և գրագիտաց օրինաւոր դիտողութիւնքը և բանադատութիւնքը՝ և ըստ այնմ ուղղել եթէ ուղղելի ինչ գտանուի, կամ աւելի լաւ և դիւրըմբռնելի հրահանգներ և կանոններ յաւելուլ, թէ և դժբաղդաբար անցեալ տարուանէ հետէ ցարդ նորա անձին դէմ յարձակուելէն և չար նախանձու և կրից արդիւնք եղող պարծենկոտ և մնաբան գրգրմունքներէն աւելի ոչ ինչ լուրջ և օգտաւէտ մի դիտողութիւն կամ բանա-

դատութիւն չիրեւեցաւ, և մի քանի անձինք այն աստիճան կիրք կբանեցնեն՝ որ եթէ յուզուած վիճաբանութեան՝ կամ լաւ ևս է ասել՝ անուանարկիչ յարձակմանց մէջ ուշադրութեան արժանի մի թեթև և կարևոր կէտ նկատուի, այն ևս իւր յարգը կըկորսնցունէ, և ցաւալի է՝ որ մի ամսագրոյ խմբագրութիւն ևս կօշինէն վեր երեր և իւր մշտական սովորութեան համաձայն՝ գրական հրապարակին վերայ տեսնուած սնապարծ և անօգուտ հակառակութեանց դէմ՝ Պ. Թաշճեանի պատասխանեաց ամբողջ հրատարակութիւնքը առանց տեսնելոյ՝ ընթեռնլոյ և համեմատելոյ՝ միայն մի կողմին և մի անձի հրատարակածը իբր թէ պաշտպանելոյ կըկանխէ՝ և այդ պաշտպանողական յօդուածոյն մէջ հակառական խօսքերով ինքնին իւր խօսքերը կջրէ և կխայտառակուի՝ և միայն այն նպատակը կերևայ՝ զի զՊ. Թաշճեանն նախատած լինի: Սակայն աներկմիտ եմք՝ որ Պ. Թաշճեան այնպիսի սնոտի հրատարակութեանց աւելի նշանակութիւն չտար և երբէք չվհատիր իւր ջանից և արդեանց մէջ, այլ ընդհակառակն՝ աւելի կհաստատմտուի և կոգևորուի, զոր կբաղձամք և կխնդրեմք Պ. Թաշճեանէն, և այս նըպատակաւ էր՝ որ ներկայ յօդուածը և մեր մի քանի խօսքը սակաւ ինչ ընդլայնեցաւ:

Այսու ամենայնիւ դարձեալ կբաղձամք և կյուսամք նաև, զի Պ. Ձայնագրագէտք՝ անձնականը ի մի կողմն ձգելով՝ սիրով միանան և միաբան խորհրդով և ջանքով ի պայծառութիւն և ի պարծանս Ազգի և Եկեղեցւոյ Հայաստանեայց աշխատին աւելի լաւ մշակել և ծաղկեցնել Հայկական ձայնագրութիւնը և իւրեանց հակառակութիւնքը այսպիսի բարի ջանից մէջ բարի հետևանքով արդիւնաւորեն:

Սակաւ միջոցէն կրկին կտեսնուիմք:

Մ.

## ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ ՆԱՄԱԿ ԽՈՐՀՐԴ. ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ.

Հետևեալին հրատարակութիւնը թէ և կանխաւ Տփխիսայ Հայոց լրագրաց մէջ տեսնուեցաւ, բայց Արարատայ մէջ ևս հրատարակել արժան կհամարիմք թախանձանօք խնդրուած՝ մանաւանդ նորա արտայայտած խնդրոյն և նպատակին վսեմութիւնը զգալի և օգտաւէտ լինելով:

Խմբագրութեան Արարատ ամսագրոյ.

Ընդ սմին առաքելով մի տպագրած շրջաբերական նամակ Խորհուրդն Ժողովոյ Մարդասիրական Ընկերութեան խոնարհաբար խնդրում է թոյլ տալ հրատարակել Ձեր պատուական «Արարատ» ամսագրի առաջիկայ թերթերի մէկում ի գիտութիւն բոլոր Անդամոց Ընկերութեան և մեր սիրելի Ազգայնոց:

Անդամք Խորհրդոյ
ԳՐԻԳՈՐ ԹՈՒՄԱՅԵԱՆՑ
Գ. ԱՅՎԱԶԵԱՆՑ.
Ատենադպիր
Ս. ՎԱՐՇԱՄԵԱՆՑ.

Ի Բագու:

ՈՂՈՐՄԱԾ ՏԷՐ.

Համաձայն 14-դ յօդ. ԲԱՐՁՐԱԳՈՅՆ հաստատեալ կանոնադրութեան Ընկերութեանս Անդամք միւս իրաւունքների շարքում ունին գլխաւորապէս յետագայ իրաւունքները. Նախ, Նոքա կարող են առաջարկել Խորհրդական Անդամոց այն անձինքները որք ցանկանումեն Ընկերութեան

Անդամակից լինել, և երկրորդ, Նոքա բանիւ կամ գրով յայտնում են իւրեանց կարծիքը ընկերութեան գործերի կարգադրութեան մասին։

Ընկերութեանս հաստատութեան օրից սկսեալ մի քանի անձինք Նոր Անդամներից արդարութեամբ կատարեցին վերոյիշեալ իրաւունքները, որպէս Նոր Անդամներ գտնելով. Նմանապէս և Ընկերութեանս գործոց վերաբերեալ զանազան օգտակար առաջարկութիւններ անելով. բայց հետզհետէ այս բարեսէր անձանց ոտները որպէս թէ թուլացան, հանդիպելով գուցէ անտարբեր մարդկանցից ծագած սիրտ կոտրող քարերին։ Սակայն այս վերջին ժամանակում Մարդասիրական ընկերութեան հորիզոնում ծագեցին մի քանի եւս հասկացող և գործունեայ անձինք, որք իւրեանց սեպհական գործերը համարեա թէ մի կողմը դրած, անդադար աշխատումեն Անդամոց թիւը բազմացնել՝ ական յայտնի տեսանելով կամ ընկերութեան հաշիւներում կարդալով այն օգտակար գործերը, որոնցով պարապումեն Խորհրդական Անդամք։ Այժմ ընկերութիւնը ունի այնպիսի գործունեայ Անդամներ, որք մօտ ժամանակումս մտանելով Անփոփոխ Անդամոց շարքը (և որոց անունները կ՚տպագրվին շուտով ընկերութեան 1874 տարուայ հաշվում) չեն դադարում Անդամներ գտնելով և շահաւէտ գրաւոր խորհուրդներ տալով Խորհրդական Անդամոց։ Այս բարեսէր անձանց տարօրինակ ջանքը և աշխատանքը տարւոյս Ընդհանուր ժողովում ներկայ գտնվող Անդամոց սրտերից դուրս բերին շնորհակալութեան և բարեմաղթութեան արձագանք։

Մարդասիրական Ընկերութեան Անդամք, եթէ մտադրութեամբ կարդացել են Նորա կանոնադրութիւնը և խորհուրդի հաշիւներում բացայայտած մտքերը, արդէն համոզված պիտի լինին, որ ամենաողորմած ԿԱՅՍՐԸ հաստատել է այս Ընկերութիւնը լուսաւորութիւն և բարեգործութիւն տարածելու համար, ոչ թէ միայն Բագու քաղաքում, այլ և Ռուսաստանի հպատակ Հայոց մէջ։ Ուրեմն մի այդպիսի գերօրինակ Նպատակին հասնելու համար բաւական չեն միմիայն դրամական միջոցները, առանց որոնց թէպէտ ոչինչ գործ չէ կարելի յառաջ տանել այս աշխարհում, այլ և հարկաւոր են բանաւոր և մարդասէր անձինք, այսինքն այնպիսի անձինք, որոնք իւրեանց հոգին առաւել են խնամում, քան թէ մարմինը, որոնք հասկանումեն, թէ Նա է ճշմարիտ Հայը՝ որ մարդասէր է և ընկերասէր՝ և թէ այս երկու յատկութիւնները ունեցողը միայն կարող է կոչվել Աստուածասէր։ Այսպիսի բարենախանձ անձինք անկասկած ընկերութեանս Անդամ՝ գրվումեն և Խորհուրդը սրանց միջնորդութեամբ ստանումէ զանազան քաղաքներից և գիւղերից այն տեղեկութիւնները, որոնք վերաբերումեն անյաջող ձևով ընթացող երկսեռ ուսումնարանաց՝ աղքատութեան լուծի տակը ճնշվող ծարաւի երիտասարդաց և այլ սոյնպիսի օգնութեան կարօտ դէպքերին։

Եւ երբ այսպէս ոգևորված Ընկերութեանս գործունեայ Անդամք փոխեցին առաջին քայլը և սկսեցին բարեգործական ղեկը ձեռներին պինդ բռնած դէպի յառաջ վարել, ոչ աջ և ոչ ահեակ Նայելով, շուտով զգացին և մի հոգեկան ուրախութիւն, տեսանելով իւրեանց աշխատանաց պըտուղները, որովհետև Խորհրդոյս թոյլտուութեամբը Նոքա Նուիրումեն ազգի աղքատ ուսումնարաններին և անհատներին դրամական կամ գրաւոր Նպաստներ, թէ իւրեանց գտած աղբիւրներից և կամ թէ Ընկերութեան դրամարկղից։

Խորհրդական Անդամք այս խօսքերով չեն կամենում միայն քարոզիչ լինել, այլ Նոքա որպէս Ընկերութեան կողմից ընտրված երեսփոխաններ, պարտաւոր են համարում ամենայն հնարք ի գործ դնել, որ մեր ազգայինք համակրեն և գործակցեն մի այդպիսի, կարելի է ասել, բեղմնաւոր Ընկերութեան. որովհետև սորա թևերին զօրութիւն տուողը մեր սիրելի ազգի իւրաքանչիւր անհատը պէտք է լինի և ոչ թէ մի անակնունելի և գերբնական երևոյթ, որին անտարբեր մարդիք սովորութիւն ունին սպասել իւրեանց կեանքի հորիզոնում առանց մի կոպէկ զոհելու հասարակութեան արկղին և յորդորելու իւրեանց ընկերակիցներին կատարելու գոնէ մասամբ մարդկութեան սրբազան պարտքը։

Ընկերութեան փոքրիկ դրամագլուխը թոյլ չի տալիս այժմս աւելի եւս տարածել ցանկալի լուսաւորութիւն և բարեգործութիւն, թէ և այսօր այս

դրամագլխով քանի քանի խղճալեաց վէրքեր են բըժշկվում և քանի քանի ուսման ծարաւի ուսանողներ են զովանում: և մի՞թէ բարոյական լոյսը բնութենական մի հրէշ է և կամ մի նոր աստղ է երկնքումը ծագած, որ կարողանայ յաւելուլ մինչ յաւէժաւոր լուսաւորել կամ Բագու քաղաքից այս ինքն Ընկերութեան կենդրոնից տարածել իւր ընդարձակ շողերը հեռաւոր երկիրների վերայ. արդարև նա այնպիսի լոյս է՝ որ կարողանում է դէպի ինքը քարշել միլիոնաւոր հեռաւորութեան լուսաւոր և բարեսէր մարդկանց սրտերը և միաւորել մի սիրտ և մի հոգի բայց ոչ զգալի երևոյթներով. Այլ ինչ ձևով կամ ինչ հնարքով կարելի է հասնել այս նպատակին, եթէ ոչ Ընկերութեան զանազան տեղերում բնակվող Անդամոց գործակցութեամբ և այն իրաւունքներով, որ նոքա ունին ԿԱՅՍԵՐԱՀԱՍՏԱՏ կանոնի զօրութեամբ: Վասնորոյ Խորհրդական Անդամք իրանց յոյսերը դրած մարդասէր Աստուծոյ նախախնամութեան վերայ, այս յորդորական նամակաւ դիմում են դէպ ի ձեզ՝ ողորմած Տէր, և խոնարհաբար խնդրում են, որ Դուք մարդկային ամենայն պարտաւորութիւններից գըլխաւորը համարելով մարդասիրութեան և եղբայրսիրութեան պատուիրանքը, չխնայէք ձեր կեանքի օրերից մի քանի ժամերը երբեմն զոհել յօգուտ մեր ազգի հասարակութեան տկար անդամոց, յօգուտ աղքատիկ դպրոցաց և ուսումնասէր երիտասարդաց՝ և վերջապէս յօգուտ աղքատութեան ծանր լուծի տակը ճնշվող որբոց և այրեաց:

Դուք երբ յանձն առէք այս թեթև և քաղցր լուծը և երբ Աստուած յաջողեց ձեզ գտնել անփոփոխ և տարեկան Անդամներ, առաջարկեցէք մեզ նոցա անուանացուցակը և Ձեզանում յղացած բարի խորհուրդները. մեք առաջին փոստայիւ կու ուղարկենք ուղղակի Ձեր վերայ Ընկերութեան Անդամոց կարգը մտանող անձանց կոչման վկայագիրը՝ և եթէ հարկը պահանջեց՝ Ընկերութեան կանոնադրութենից՝ հին և նոր հաշիւներից մի մի հատ. Վերջապէս ուրախութեամբ կ'կատարենք Ձեր այն առաջարկութիւնները, որոնք կ'վերաբերին բարեգործական դիպուածոյ:

Մաղթելով ի Տեառնէ, որ նա տայ Ձեզ կարողութիւն, զօրութիւն և երկար կեանք վասն ազգի և Մարդասիրական Ընկերութեան. մնամք ամենախոնարհ Անդամք Խորհրդոյ Ժողովոյն Նոյն Ընկերութեան.

Նախագահ Խ. Բանանեանց.
Անդամք Խորհրդոյ Կ. Աբասքէշեանց.
Յ. Աղբէքեանց.
Գ. Թումայեանց.
Գ. Գէլփաբէանց.
Յ. Տոստոսբեանց.
Գ. Այվազեանց.
Ատենադպիր Մ. Վարդանեանց.

Այսպիսի մի գեղեցիկ նպատակի ձայնը կ'յուսամք որ արձագանք կգտանէ բարեպաշտ և ջերմեռանդ Հայոց սրտից և զգացմանց մէջ, և Մարդասիրական Ընկերութեան մասնաւոր շրջանը՝ հետզհետէ ընդհանուրին ուղղեալ բարի գործողութեանց կվերածուի:

ՑԵՑՍԿԷ

Խմբագրութեան Արարատ ամսագրոյ.

Ի 28-ն Մարտի տարւոյս՝ Նշանաւոր հայկազնեայ գիտնական Նոր-Նախիջևանցի Եսկարինակ Սարգիս Աւետիսեան Տիգրանեանց՝ 62 ամաց հասակի մէջ կնքելով իւր բազմարդիւն գործունեայ կեանքը՝ փոխեցաւ ի հանգիստ իւր յաւիտենից:

Այս գիտնական անձը՝ իւր հազուագիւտ և բազմատեսակ բարեմասնութիւններովն իրաւամբ վայելած էր հասարակաց կեանքի մէջ իւր թէ համազգի և թէ այլազգի ծանօթից ջերմ համակրութիւնը ու լիակատար սէրը:

Հանգուցեալն ի Մոսկվա՝ Տէրութեան համալսարանի մէջ՝ իւր ուսումն աւարտելէն ետքը՝ հայկական մատենագրութեան և Ռուսաց ու Լատին լեզուաց ուսուցիչ եղած է Մոսկվայի Գ. Լազարեանց ճեմարանի մէջ ի 1830 - 1837 թ.

1838-ին նշանակուած է Ռոստովի նահանգական ուսումնարանի մէջ ուսուցիչ Ընդհանուր պատմութեան: